



Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում, Հրազդան գետի ձախ ափին է գտնվում Կարմիր բլուր հնավայրը, որի տարածքում մ.թ.ա. VIIդ. 1-ին քառորդում Ուրարտական թագավոր Ռուսա Բ-ի (685-645թթ.) օրոք հիմնադրվել է Թեյշեբահնի բերդ-ամրոցը: Այն նվիրված է եղել ուրարտական հզոր աստվածներից երկրորդին՝ ռազմի և ամպրոպի աստված Թեյշեբային: Մինչև XXդ. 1-ին կեսը գրեթե ոչինչ հայտնի էր Թեյշեբահնի մասին: Միայն էջմիածնի կաթողիկոսարանի արխիվում էր պահպանվել “Կավակերտ” անվամբ մի փոքրիկ ժամատուն այդ վայրում, որը սակայն հետագայում ավերվել էր: Հրազդանի կիրճի երկրաբանական կառուցվածքների ուսումնասիրությունների ժամանակ 1936թ. ռուս երկրաբան Ա. Դեմյոխինը գտնում է հղկված բազալտի կտոր, որի վրա եղել է սեպագիր արձանագրության մի հատված: Այդ պատառիկի ուսումնասիրությունից պարզվեց, որ արձանագրությունը վերաբերում է մ.թ.ա. VII դարին և հիշատակում է ուրարտական թագավոր՝ Արգիշտի որդի Ռուսայի անունը: Կարմիր բլուրի կանոնավոր պեղումները սկսվեցին 1939թ.՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի (ՀԳԱ) և Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) Պետական երմիտաժի հնագիտական արշավախմբերի կողմից:



Միջնաբերդի և նրա շուրջը տարածվող քաղաքի պեղումները մեկընդմիջտ պարզեցին ուրարտական հզոր թագավորներից մեկի՝ Ռուսա Բ-ի կողմից հիմնադրված և տնտեսական ու ռազմական մեծ վերելք ապրած Թեյշեբահնի քաղաքի պատմությունը: Մ.թ.ա. 714թ. ասսուրական թագավոր Սարգոն Բ-ի դեպի Ուրարտու կատարած ավերիչ արշավանքներից ու երկիրը ամայացնելուց հետո, ուրարտական թագավորներ Արգիշտի Բ-ն ու նրա հաջորդը՝ Ռուսա Բ-ն մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի վերականգնեն պետության հզորությունը և քաղաքական անկախությունը: Նրանք երկրում ծավալում են ամրոցների, քաղաքների, ռազմակայանների և ջրանցքների շինարարություն: Մյուս կողմից դաշնակիցներ են գտնում հյուսիսային ցեղերի մոտ, որոնք անհրաժեշտության պահին պետք է զինակցեին ուրարտացիներին Ասորեստանի դեմ մղած դարավոր պայքարում:

Թեյշեբահնի քաղաքի գոյությունը սակայն երկար չի տևում: Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի վերջնական կործանումից հետո (մ.թ.ա. 605թ.) Ուրարտական պետությունը ենթարկվում է կործանիչ արշավանքների միդիացիների և բաբելոնացիների կողմից:



Մոտ մ.թ.ա. 590թ. միդիացիների հարվածներից վերջնականապես ընկավ Տուշպա մայրաքաղաքը, իսկ Ուրարտուի կենտրոնական հատվածները մտան Միդիայի կազմի մեջ:

Նույն ճակատագրին է արժանանում նաև Թեյշեբահինի քաղաքը, որի գրավմանն ու կործանմանը մասնակցում էին տեղական ցեղախմբերը և սկյութները:
Քաղաքի գրոհը սկսվել է գիշերը և թշնամին ամրոց է մտել ոչ թե գլխավոր դարպասներից, այլ ամրոցի հյուսիս-արևմտյան կողմից՝ Հրազդան (Իլդարունի) ձախ ավից, որտեղից էլ պեղումների ժամանակ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ սկյութական նետասլաքներ:
Թեյշենահինի հրկիզումից և կործանումից հետո կյանքն այլևս չի վերականգնվել քաղաքում:
Այն աստիճանաբար ամայացել ու անապատացել է, ինչպես Ուրարտուի շատ բերդ-ամրոցներում՝ մինչև հնագետի բրիչի 1-ին հարվածը, որի շնորհիվ մեր առաջ բացվում են Ուրարտուի և նրա հյուսիսային սահմանները պահող-հսկող Թեյշեբահինի ամրոցի պատմության փառավոր էջերը: